ՈՐՈՇՈՒՄ

«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան **26-ը դեկտեմբերի 2024 թվական**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՐՄՄԳ-ԷԱՃԱՊՁԲ-ՊՈՄՊ-2024» ծածկարգով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման հիմնավորումը.

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ–ի կարիքների համար ջրի պոմպի ձեռքբերման նպատակով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ–ի և «Տենդեր Պրո» ՍՊԸ–ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 2024թվականի օգոստոսի 23-ին կնքվել է՝ ԵՐՄՄԳ-ԷԱՃԱՊՁԲ-ՊՈՄՊ-2024 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2024թվականի հոկտեմբերի 10-ը: 19.12.2024թվականին գրությամբ ծանուցվել է Ընկերությանը տրամադրելով ժամկետ ապրանքի մատակարարման համար մինչև 23.12.2024թ ժամը 16:00-ն: Գրությամբ տեղեկացվե է, որ ապրանքի չմատակարարման դեպքում համաձայն 2.1.7 կետի պայմնագիրը միակողմանի կլուծվի: Ընկերության կողմից վերը նշված ծանուցմանը արձագանք չի եղել: Փաստացի համարվում է,

որ Ընկերությունը հրաժարվում է ապրանքի մատակարարումից: Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի Պատվիրատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է մատակարարման ժամկետը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, պայմանագրի 2.1.7 կետի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ն 2024թ. դեկտեմբերի 25-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագրերը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն սահմանված կարգով հրապարակել է տեղեկագրում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից հարկ է նշել, որ եթե մինչև 2025 թվականի հունվարի 7-ը Ընկերության կողմից վճարվի վերը նշված 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ պայմանագրի կատարման ապահովման և 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները, ապա Պատվիրատուի կողմից միջոցներ կձեռնարկվեն սույն որոշման հիման վրա իրականացված գործընթացը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն փաստը, **որ առկա է այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին՝** գտնում եմ, որ վերը նշված վճարները Պատասխանողի հաշվեհամարին չփոխանցելու դեպքում **առկա է լինելու** «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊ ընկերությանն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊ ընկերությանը ներառել նշված ցուցակում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 08-ից:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու	

			մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը		իրավունքից	
«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ	08274655	ք. Երևան, Բաղրամյան 1 փկղ., 14շ., 147 բն		ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, պայմանագրի 2.1.7 կետ		ԵՐՄՄԳ-ԷԱՃԱՊՁԲ-ՊՈՄՊ-2024 26.12.2024թ

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան»
ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն՝

Ռաֆայել Սահակյան